

«ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ» ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»

**ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՅԵՌԱՑՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅՈՒՆ

I ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ,
Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահումյան, Շահումյան ԹՖ, Մուսալեռ,
Նորակերտ, Հուշակերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական,
Աղավնատուն, Պտղունք գյուղեր



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի շրջանակները	3
2. Զրամատակարարման և ջրահեռացման առկա համակարգի նկարագրություն	3
3. Բնակավայրերի աշխարհագրական դիրքը և կլիման	4
3.1 Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեջատ, Դաշտ, Դողս, Մուսալեռ, Շահունյան, Շահունյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուլալերտ, Աղավնատուն, Պտղունք գյուղական համայնքներ	4
3.2 Արագածոտնի մարզի Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղական համայնքներ	5
4. Կենսաբազմազանություն և հատուկ պահպանվող տարածքներ	6
4.1. Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեջատ, Դաշտ, Դողս, Մուսալեռ, Շահունյան, Շահունյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուլալերտ, Աղավնատուն, Պտղունք գյուղական համայնքներ	6
4.2. Արագածոտնի մարզի Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղական համայնքներ	7
5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	8
5.1. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթ	9

1. Աշխատանքի շրջանակները

Ենթաժրագրի այս ենթաբաղադրիչի նպատակն է բարելավել ծրագրի շրջանակներում ընդգրկված ՀՀ Արմավիրի մարզի /Էջմիածին քաղաք, Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Մուսալեռ, Շահումյան, Շահումյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուլիսկերտ, Աղավնատուն, Պտղունք գյուղեր/ և Արագածոտնի մարզի /Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղեր/ բնակավայրերի խմելու ջրի մատակարարման համակարգերը:

Առաջնահերթությունը տրվել է բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի բարելավմանը: Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահումյան, Շահումյան ԹՖ, Մուսալեռ, Նորակերտ, Հուլիսկերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն, Պտղունք գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով իրականացվող աշխատանքները ներառում են՝

- de50-de200 տրամագծերի պոլիէթիլեն ջրագծերի կառուցում - 127.0 կմ
- Փականային հանգույցների կառուցում - 74 հատ
- Թաղված փականային հանգույցների կառուցում - 170 հատ
- Անհատական տների մուտքագծերի կառուցում - 59.5 կմ
- Անհատական տների ջրաչափական հանգույցների կառուցում - 5950 հատ

Էջմիածին քաղաքի ջրահեռացման ցանցում նախատեսվող բարելավման աշխատանքները ներառում են՝

- de160-de200 տրամագծերի պոլիէթիլեն կոյուղուղագծերի կառուցում - 0.7 կմ
- Կոյուղու դիտահորերի կառուցում - 30 հատ

Էջմիածին քաղաքի և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահումյան, Շահումյան ԹՖ, Մուսալեռ, Նորակերտ, Հուլիսկերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն, Պտղունք գյուղերի բնակչության թիվը 01.01.2012թ. դրությամբ կազմում է 83825 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 56400 մարդ: Բաժանորդների ընդհանուր թիվը գյուղական համայնքներում կազմում է 6190:

Տարեկան բնակչության աճի ցուցանիշը համաձայն «Հայաստանի Ժողովրդագրական ժողովածու 2007»-ի հրատարակված տվյալների կազմում է 0.43 %:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է գյուղական համայնքների բնակիչներին ապահովել խմելու որակի ջրով և կայուն ջրամատակարարմամբ:

2. Ջրամատակարարման և ջրահեռացման առկա համակարգի նկարագրություն

Էջմիածին քաղաքի և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Մուսալեռ, Շահումյան, Շահումյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուլիսկերտ, Աղավնատուն, Պտղունք Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղական համայնքների ջրամատակարարումն իրականացվում է Աշտարակի տարածաշրջանի Բազմաղբյուր և Ղազարավան ստորերկրյա ջրաղբյուրներից՝ երեք հիմնական համակարգերի միջոցով.

- Բազմաղբյուր- Էջմիածին ինքնահոս համակարգ

- Ղազարավան-Էջմիածին ինքնահոս համակարգ
- Ղազարավան-Էջմիածին ինքնահոս համակարգ (ճալերի Ջուր)

Ներկայումս համակարգերում գործում են 10 աղբյուրակապ, 2 քլորակայան: Գոյություն ունեցող ընդհանուր 14 խորքային հորերը Էջմիածին քաղաքի և գյուղերի սպասարկման համար չեն շահագործվում:

Գլխամասային կառուցվածքներից ջուրը տեղափոխվում է 300-600 մմ տրամագծերի երեք մայր ջրատարների միջոցով, որոնց ընդհանուր երկարությունը 136 կմ է:

2007-2011թթ թվականներին Համաշխարհային Բանկի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում իրականացվել է Էջմիածին քաղաքի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ:

2008-2012 ԱԶԲ-ի ՋևՋ սեկտորի ծրագրի շրջանակներում իրականացվել է Էջմիածին քաղաքի և գյուղական համայնքները սնող արտաքին ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքներ:

Ուսումնասիրված բնակավայրերից Էջմիածին քաղաքը կոյուղացված է, սակայն գոյություն ունեցող ԿՄԿ-ը չի գործում: Կոյուղու գլխավոր կոլեկտորներում և միջքաղամասային ջրահեռացման ցանցում կան վթարված հատվածներ, որոշ դիտահորեր կարիք ունեն վերանորոգման:

Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահումյան, Շահումյան ԹՖ, Մուսալեռ, Նորակերտ, Հուշակերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն, Պտղունք գյուղերը կոյուղացված չեն և բնակչությունն օգտվում է բակային զուգարաններից, կամ ունեն սանհանգույցներ, որոնք միացված են սեփական տարածքում կառուցված կեղտաջրերի հավաքման հորերին: Որոշ գյուղերում առածին շենքեր (դպրոց, մանկապարտեզ և այլն) ունեն կոյուղագծեր:

3. Բնակավայրերի աշխարհագրական դիրքը և կլիման

Ենթածրագրի շրջանակներում ընդգրկված համայնքներից՝ Էջմիածին քաղաքը և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Մուսալեռ, Շահումյան, Շահումյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուշակերտ, Աղավնատուն, Պտղունք գյուղերը գտնվում են Արմավիրի մարզում, իսկ Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական գյուղերը՝ Արագածոտնի մարզում: Վերը նշված համայնքները կազմում են հանրապետության հարավ-հարավարևմտյան տարածքի մի մասը, որտեղ ռելիեֆը փոքրաթեք է, ոչ բարձր թմբաբլրաշարքերով: Բացարձակ նիշերը տատանվում են 950-1100մմ սահմաններում:

3.1 Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Մուսալեռ, Շահումյան, Շահումյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուշակերտ, Աղավնատուն, Պտղունք գյուղական համայնքներ

Արմավիրի մարզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի արևմտյան մասում, Արաքս գետի ձախ ափին: Արմավիրի մարզի տարածքն իր մեծությամբ ամենափոքրն է, զբաղեցնում է 1200կմ² մակերես: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է: Էջմիածին քաղաքը մարզկենտրոնից գտնվում է 25կմ հեռավորության վրա, իսկ Երևան քաղաքից՝ 20կմ հեռավորության վրա:

Տարածաշրջանը բնութագրվում է տաք, շոգ ամառով և ցուրտ անհողմային ձմեռով, որտեղ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը $21,5^{\circ}\text{C}$ է, իսկ հունվարի միջին ջերմաստիճանը՝ $3,8^{\circ}\text{C}$ է: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 41°C է, իսկ բացարձակ նվազագույնը -31°C է: Միջի տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 280-340մմ է: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 42 սմ: Գրունտի սառեցման խորությունը 0.50-0,70 մետր է՝ կախված բացարձակ բարձրությունից: Օդի միջին բազմատարյա հարաբերական խոնավությունը կազմում է 59%: Քամու միջին տարեկան արագությունը 1,8մ/վրկ է:

Լեռնագրական տեսանկյունից Արարատյան գոգահովտում կարելի է առանձնացնել երկու շրջան՝ առաջինը ընդգրկում է նախալեռնային գոտին, իսկ երկրորդը, որի մեջ մտնում է ուսումնասիրվող տարածքը, իրենից ներկայացնում է լայն հովիտ, որը լցված է գետաբերուկային-հեղեղաբերուկային գոյացումներով (կուտակիչ դարավանդեր և Արաքս գետի ողողահուն):

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը հարուստ է գրունտային ջրերով: Նրանք հանդիպում են տարբեր խորությունների վրա՝ սկսած 0-5-ից 100 և ավելի մետր խորություններում: Ստորերկրյա ջրերի առկայությունը պայմանավորված է լճա-գետային գոյացություններով և ճաքճքված անդեզիտա-բազալտներով:

Բնակավայրերի բնակելի տարածքները գտնվում են 800-1000մ միջերի սահմաններում:

3.2 Արագածոտնի մարզի Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղական համայնքներ

Արագածոտնի տարածաշրջանի դիտարկվող տարածքը գտնվում է Արարատյան գոգավորության նախալեռնային գոտում, Աշտարակ քաղաքից 3-5կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ-արևմուտք, իսկ Երևան քաղաքից 20-22կմ հեռավորության վրա: Մարզկենտրոնը Աշտարակ քաղաքն է:

Արագածոտնի մարզի ուսումնասիրվող տարածաշրջանի կլիման խիստ ցամաքային է՝ բնորոշվում է շոգ ամառներով և բավական ցրտաշունչ ձմեռով: Տեղանքում օդի միջին տարեկան ջերմաստիճանը $+9,1^{\circ}\text{C}$ է, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև -34°C , իսկ բացարձակ առավելագույնը՝ $+38^{\circ}\text{C}$: Միջին տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 447մմ, առավելագույնը՝ 715մմ: Ձմռան ընթացքում ձյան միջին ծածկույթը հասնում է 28սմ, առավելագույնը՝ 68սմ: Գրունտի սառեցման առավելագույն խորությունը 79սմ է: Օդի միջին բազմատարյա հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Քամու միջին տարեկան արագությունը 2,8մ/վրկ է:

Այստեղ ռելիեֆը պայմանավորված է տարածքի երկրաբանական պայմանների, կլիմայական, տեղադիրքային և այլ գործոնների առանձնահատկություններով: Քասախ գետի տարածաշրջանն ունի նախալեռնային ձորակներով կտրտված լայնատարած լանդշաֆտ: Հյուսիսային մասում տարածքը սահմանակից է Արագած լեռան հարավային ցածրադիր փեշերին, որտեղ երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հայկական լեռնաշղթայի հրաբխածին հատվածքներ:

Քանի որ հրաբխածին կազմավորումները ենթարկված են ինտենսիվ հողմնահարման և բնութագրվում են խիստ ճեղքավորվածությամբ, գրունտային ջրերը ինֆիլտրացված են բավական խորը հորիզոններում և նրանց մակարդակները տեղակայվում են 15-20մ-ից ներքև:

Բնակավայրերի բնակելի տարածքները գտնվում են 950-1100մ միջերի սահմաններում:

4. Կենսաբազմազանություն և հատուկ պահպանվող տարածքներ

4.1. Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Ղաշտ, Ղողս, Սուսայեռ, Շահունյան, Շահունյանի Թ/Ֆ, Նորակերտ, Հուշակերտ, Աղավնատուն, Պտղունք գյուղական համայնքներ

Տարածքի բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանի՝ ավազա-կավային մայր ապարների վրա զարգացած չոր տափաստանային բուսականության տեսակներով:

Այս լանդշաֆտային գոտում գրանցված է մոտ 130 բուսատեսակներ, որոնցից որպես դոմինանտ հանդիսանում են հովվափող լանցետային (ALISMA LANCEOLATUM), սովորական նետախոտը (SAGITARIA SAGITTIFOLIA L.), եռատերև նետախոտը (SAGITARIA TRIFOLIA L.), խոզանափուշ բարակը (CAUCINIA TENELLA), ACANTHOPHYLLUM PUNGENS (փշատերևուկ ծակող), SALSOLA TAMAMSCHJANAE (օշան Թամամջյանի), SPINACIA TETRONDA (սպանախ քառաեզ), ASTRAGALUS PARADOXUS (գազ տարօրինակ), TRIGONELLA CAPITATA (հացհամեն գլխիկավոր), AEGILOPS CRASSA (այծակն հաստ), TRITICUM ARARAICUM (ցորեն Արարատյան), TAMARIX (կարմրան), TANARIX OCTANDRA (կարմրան ութառեջանի) և այլն:

Տարածքում պահպանության կարիք ունեցող բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. Խնկեղեգ ճահճային, *Convolvulus commutatus* Boiss Պատատուկ փոփոխական, *Lactuca Takhtadzani* Sosn Կաթնուկ Թախտաշյանի, *Astragalus paradoxus* Գազ տարօրինակ *Diospyros lotus* Խուրմա կովկասյան և այլն:

Այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ:

Դիտարկվող տարածքին բնորոշ և դոմինանտ կենդանիների տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ), Հայկական որոր (Larus armeniacus But.) և այլն:

Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Erinaceus auritas* Gmelin Լայնականջ ոզնի, *Rhinolophus Mehelyi* Մեհելիի պայտաքիթ, *Vormela peregusna peregusna* Guld. Հարավուսական խայտաքիս, *Plagadis falcinellus* Linnaeus Քաջահավ:

Ենթաձրագրի իրականացման տարածքներում բնապահպանական տեսանկյունից խոցելի տարածքներ չկան: Տարածաշրջանում է գտնվում «Որդան կարմիր» արգելավայրը, որի սահմանը ենթաձրագրի շրջանակում ընդգրկված արգելավայրին ամենամոտ բնակավայրից՝ Էջմիածին քաղաքից գտնվում է 18կմ հեռավորության վրա և այդ տարածքները չեն կրի վնասակար ազդեցություն ձրագրի իրականացման արդյունքում:

Ենթաձրագրում ընդգրկված բնակավայրերը չունեն նաև մշակութային, հնագիտական կամ ժառանգված տեղանքներ: Այս տեղեկությունները պարզվել են գյուղերում գյուղապետերի հետ անցկացված հարցումների արդյունքում:

4.2. Արագածոտնի մարզի Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղական համայնքներ

Դիտարկվող տարածքների բուսատեսակները ներկայացված են Ապարանի և Երևանի ֆլորիստիկ շրջանների բուսականության տիպերով: Տարածքին բնորոշ են մարգագետնային, տափաստանային ու կիսաանապատային բուսականության տիպերը:

Հացազգիների տարածված են սիզախոտը (*Phleum* sp.), դաշտավլուկը (*Poa* sp.), շյուղախոտը (*Festuca* sp.): Հիմնականում հանդիպում է *Artemisia fragrans* (Օշինդր հոտավետ) ֆորմացիան: Տափաստանային բուսատեսակները ներկայացված են փետրախոտային, շյուղախոտային և ցորնուկային ֆորմացիաներով, որոնցից գերիշխում են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), բարակոտնուկ սանրածև (*Koeleria cristata*), փետրախոտ տխուր (*Stipa tirsia*) և այլն: Զգալի են ուրցի բազմաթիվ տեսակների մասնակցությունը, շյուղախոտ ոչխարային (*Festuca ovina*), բոշխ ցածր և այլն: Հանդիպում են նաև՝ *Plantago* - եզան- լեզու: *Tragopogon* – սինձ, *Taracsacum* – խատուտիկ, *Betonica* – թթվիճ, *Vicia* – վիկ, *Trifolium* - երեքնուկ, *Cirsium* - փուշ, իշկաթնուկ – *Euphorbia*, կակաչ – *Papaver*, թփերից՝ մասրենի – *Rosa*, ցաքի – *Paliurus*, ոզնաթուփ - *Acantholimon*:

Ծառատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ բարդի (*Populus*), սկազիա (*Robinia*), թխկի (*Acer*), թթենի (*Morus*), վայրի ծիրանենի (*Armeniaca*), սզնի (*Crataegus*), ուռատերև տանձենի (*Pyrus salicifolia*), սովորական և սրապտուղ հացենի (*Fraxinus excelsior*, *F.oxycarpa*), աղեղնաեզր ասպիրակ (*Spiraea crenata*), արևելյան ծորենի (*Berberis orientalis*), սովորական չմենի (*Cotoneaster integerrima*), վրացական ցախակեռաս (*Lonicera iberica*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), թելի – *Ulmus*, ալուչա -*Prunus* , փշատենի – *Elaeagnus*, ուռենի – *Salix*, մասրենի – *Rosa* :

ՀՀ բույսերի Կարմիր գրքի նոր տարբերակում ձրագրի տարածաշրջանում գրանցված բուսատեսակներից են (i) *Hohenackeria exscapa* (Stev.) K.-Pol. – Հոհենակերիա անցողուն, EN – Վտանգված տեսակ:

Այս տարածաշրջանում անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են մորեխների /*Oedopoda coerulescens*, *Oe. Miniata*, *Pholidoptera satunini*, *Scintharista notabilis*, *Tmethis festivus*, *Spingopterus* /, ծղրիղների /*Phytodrymadusa armeniaca*/ տեսակներ, երկթևանիներ /*Tomomyza araxana*, *Bombilus schelkovnikovi*/: Կարիճներից հանդիպում է միայն դեղին կարիճը / *Buttus caucasicus*/.

Կաթնասուններից ամենուրեք տարածված են նապաստակը (*Lepus europaeus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գայլը (*Canis lupus*): Լայն տարածում ունեն կրծողների կարգի ներկայացուցիչներ, որոնցից են մկնանմանների (*Muridae*) ընտանիքի տեսակները, հատկապես դաշտամկները (*Microtinae*):

Թռչուններից առավել լայն տարածում ունեն ճնղուկանմանները (*Passeriformes*) և ճուռկանմանները (*Falconiformes*):

Սողուններից այս գոտուն բնորոշ են բարեկազմ օձազլուղ մողեսը *Ophisops elegans*/, Շտրաուսի *Eremias strauchi*/ և Անանդրկովկասյան *E. pleskei*/ մողեսիկները և այլն:

Ենթածրագրի իրականացման տարածքներում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ:

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

Շրջակա միջավայրի նախնական զննությունը (ՇՄՆԶ) բացահայտել է, որ նախատեսվող ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների իրականացման տարածքներում՝ լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողայի և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Ենթածրագիրն իրականացվելու է հիմնականում բնակավայրերի կառուցապատված տարածքներում, իսկ աշխատանքների իրականացման համար նոր տարածքներ չեն օգտագործվելու:

Ըստ շրջակա միջավայրի նախնական զննության ենթածրագիրը դասակարգվել է որպես Բ կարգի ծրագիր: Աշխատանքային նախագծի հետ տվյալ ենթածրագիր համար պետք է մշակվի շրջակա միջավայրի կառավարման պլան */ՇՄԿՊ/*, որը պետք է ներառի աշխատանքային նախագծում ներառված բոլոր համայնքները:

5.1. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթ

Երկիր/Նախագծի անվանում

ՀՀ Բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում

Սեկտորի բաժին

Ենթաժրագիր 1- ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահումյան, Շահումյան ԹՖ, Սուսալեռ, Նորակերտ, Հուշակերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն, Պտղունք գյուղեր

Ստուգող հարցեր	Այո	Ոչ	Նշումներ
Ա. Շինհրապարակը Նախագծային տարածքն է...	+		տեղակայում այնպիսի տարածքում, որպեսզի նվազագույնի հասցվի հողի և առկա ջրային ռեսուրսի աղտոտումը
1 Բնակեցված է խիտ	+		
2 Ծանրաբեռնված է զարգացման ծրագրերով	+		Բնակավայրերի 40%-ն ունի զարգացման ծրագրային քաղաքաշինական փաստաթղթեր /գլխավոր հատակագծեր/
3 Գտնվում է որևէ էկոլոգիապես զգայուն տարածքի մեջ կամ նրան կից		+	
• Պատմամշակութային ժառանգության տարածք	+		Համարյա բոլոր բնակավայրերում առկա են պատմամշակութային հուշարձաններ, սակայն ծրագիրը չի առնչվում վերջիններին հետ
• Պահպանվող տարածք		+	
• Ջրային տարածք		+	
• Մանգլենիներ		+	
• Գետաբերան		+	
• Պահպանվող տարածքի բուֆերային գոտի		+	
• Կենսաբազմազանության պահպանման հատուկ տարածք		+	«Որդան կարմիր» արգելավայրը գտնվում է 18կմ հեռավորության վրա
• Այլ տիպի տարածք ներթափանցող հողայկտոր		+	
Բ. Բնապահպանական հավանական ազդեցություններ Արդյո՞ք նախագիծը կհանգեցնի.			
4 աննշակ ջրի ախտոտում համայնքներից, արդյունաբերության կամ գյուղատնտեսության արդյունքում առաջացած կոյուղու ջրերեվ և հողի էրոզիա	+		Ջրագծերի անցկացման թեք տեղանքում իրականացվելու են միջոցառումներ՝ կանխելու համար հողի էրոզիան և հողատարման պրոցեսները,
5 պատմամշակութային հուշարձանների տարածքների վատթարացման, կորստի/վնասման		+	Համարյա բոլոր բնակավայրերում առկա են պատմամշակութային հուշարձաններ, սակայն ծրագիրը չի առնչվում վերջիններին հետ
6 գրունտային ջրերի չափից դուրս պոմպերով արտահղման հետևանքով հողի նստեցման վտանգի		+	չի կանխատեսվում

Ստուգող հարցեր	Այո	Ոչ	Նշումներ
1 համայնքների տեղափոխությունների հետևանքով հասարակական կոնֆլիկտների		+	չի կանխատեսվում
2 մակերևութային և գրունտային ջրերի այլ օգտակար նպատակներով օգտագործման համար անմշակ ջրի մատակարարման կրճատման հետևանքով կոնֆլիկտների առաջացում	+		հիմնականում ձկնաբուծությունը և ոռոգման նպատակով ջրօգտագործումը կարող են առաջացնել ջրի ծավալի կրճատում
3 ոչ բավարար անմշակ ջրի մատակարարման (օրինակ՝ չափից դուրս պաթոզեն կամ հանքային բաղադրիչներ)		+	
4 ոչ ապահով ջրի մատակարարում բաշխիչ ցանցին		+	
5 Ջրընդունիչների և հորերի ոչ համապատասխան պաշտպանության, որն էլ կհանգեցնի ջրամատակարարման աղտոտման		+	բարելավման աշխատանքները ներառում են ջրընդունիչների վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ
6 գրունտային ջրերի չափից դուրս արտամղում, որը կհանգեցնի աղակալման և գրունտի նստեցման		+	ծրագրով ներառված համայնքներում խորքային հորերից ջրի օգտագործումը փոխարինվել է աղբյուրներից ինքնահոս ջրամատակարարմամբ
7 ջրիմուռների չափազանց մեծ քանակի աճ ջրահավաք ջրամբարներում		+	
8 համայնքի սարքավորումների ծավալները գերազանցող կոյուղաջրի առաջացման		+	համայնքներում բացակայում են կեղտաջրերի մաքրման կայանները
9 ջրի մշակման կայաններից տիղմի ոչ համապատասխան կերպով հեռացման		+	մշակման կայանից տիղմը պետք է հեռացվի սահմանված կարգով
10 պոմպակայանների և կոյուղու մաքրման կայանների շրջակայքում ոչ համարժեք բուֆերային գոտու առաջացման՝ աղմուկը և այլ հնարավոր անհարմարավետությունները մեղմացնելու և սարքավորումները պաշտպանելու նպատակով	+		անհրաժեշտության դեպքում կստեղծվեն սանիտարապաշտպանօջ գոտիներ
11 ջրատարների և մոտեցնող ճանապարհների վատթարացման		+	ջրատարները և ճանապարհները վերանորոգվում են
12 քլորի և այլ վտանգավոր քիմիական նյութերի ստացման, պահպանման համար նախատեսված միավորների ոչ համարժեք նախագծման հետևանքով առողջության համար վտանգների	+		ՇՄԿՊ-ի աղյուսակի մեջ կներառվեն անվտանգության միջոցառումներ
13 վտանգների այն աշխատողների առողջության և ապահովության համար, ովքեր աշխատում են վարակազերծման համար օգտագործվող քլորի, կամ այլ աղտոտող նյութերի հետ, ինչպես նաև կենսաբանական և ֆիզիկական վտանգների նախագծի շինարարության և շահագործման ընթացքում	+		քլորի, կամ այլ աղտոտող նյութերի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել սահմանված տեխնոլոգիական գործընթացները
14 մարդկան տեղահանման կամ հարկադիր վերաբնակեցման		+	չի կանխատեսվում
15 անհամաչափ ազդեցության աղբատների, կանանց և երեխաների, բնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա		+	չի կանխատեսվում
16 շինարարության հետևանքով աղմուկի և փոշու առաջացում	+		բնորոշ են շինարարական աշխատանքներին, մեղմացնող միջոցառումները կներառվեն ԲԿՊ-ում
17 շինարարական գոծունեության միջամտության պատճառով ճանապարհային երթևեկության ավելացում	+		մշակել երթուղիներ և սահմանել կայանման տեղեր
18 շինարարության հետևանքով գրունտների էրոզիայի/տիղմի սողանքների	+		կոնկրետ միջոցառումները կտրվեն ԲԿՊ-ում

Ստուգող հարցեր	Այո	Ոչ	Նշումներ
19 շահագործման և տեխնիկական սպասարկման մաքրման թերի գործընթացների հետևանքով ոչ ապահով ջրի մատակարարման (հատկապես տիղմի կուտակումներ ֆիլտրերում), ինչպես նաև բաշխիչ ցանցերում քլորի մնացորդների թերի մոնիտորինգի պատճառով ոչ համապատասխան քլորացման		+	Քլորացումն իրականացվելու է համապատասխան ցուցումներով և հաշվարկով
20 ջրի մատակարարում բաշխիչ ցանց, որը կոռոզիայի է ենթարկվել համապատասխան քիմիկատների կիրառման հանդեպ անբավարար ուշադրության պատճառով			
21 քլոր-գազի հանկարծակի հոսակորուստի		+	
22 ջրի չափից դուրս հեռացման, որը կազդի ստորին հատվածի ջրի սպառողների վրա		+	համակարգերի վերակառուցման նախագիծը մշակվում է բացառելու համար նման իրավիճակները
23 ջրի օգտագործման մրցակցության		+	ծրագրի նպատակն է մեղմել ջրի օգտագործման մրցակցությունը
24 ջրի մեծ ծավալով մատակարարման հետևանքով կոյուղու ջրերի հոսանքի ավելացման	+		
25 կենցաղային ջրերի ծավալի ավելացման (խոհանոցային և լվացքի ջուր) և կոյուղու մաքրման կայաններում տիղմի առաջացման		+	Ոչ մի բնակավայրում կոյուղու մաքրման կայան չկա
26 նախագծի շինարարության և շահագործման ընթացքում բնակչության մեծ ներհուսքի, որը կհանգեցնի հասարակական ենթակառուցվածքների և ծառայությունների վրա հավելյալ ծանրաբեռնվածության (ինչպես օրինակ ջրամատակարարում և կոյուղու համակարգ)		+	ծրագիրը գոյություն ունեցող համակարգերի վերակառուցման է վերաբերվում. սոցիալական նոր ազդեցություն չի կանխատեսվում
27 հասարակական խնդիրների, եթե աշխատողները աշխատանքի վերցվեն այլ շրջաններից կամ երկրներից		+	հիմնականում ներգրավվելու է տեղական աշխատուժ
28 վտանգ համայնքի առողջության և անվտանգության համար տրանսպորտի, պահեստավորման , այնպիսի նյութերի օգտագործման և/կամ տեղափոխման պատճառով, ինչպես օրինակ պայթուցիկներ, վառելիք կամ այլ քիմիկատներ շահագործման և շինարարության ընթացքում	+		մեղմացնող միջոցառումները կներառվեն ԲԿՊ-ում
29 վտանգ համայնքի անվտանգության համար և՛ պատահական, և՛ բնական ռիսկերի դեպքում, հատկապես այնտեղ, որտեղ նախագծի կոնստրուկտիվ էլեմենտները կամ բաղադրիչները հասանելի են ազդեցության ենթարկվող համայնքի անդամներին, կամ ձախողումը կարող է վնաս հասցնել համայնքին նախագծի շինարարության, շահագործման և ապաշահագործման հետևանքով:	+		պատահական, և բնական ռիսկերից ոչ ոք ապահովագրված չի...

Հարցեր կլիմայական փոփոխությունների և աղետների ռիսկի վերաբերյալ Հետևյալ հարցերը նախատեսված չեն բնապահպանական դասակարգման համար: Երանք այս հարցաթերթում ընդգրկվել են, որպեսզի օժանդակեն կլիմայական աղետների հնարավոր վտանգները սահմանել	Այո	Ոչ	Նշումներ
1 Արդյո՞ք նախագծային տարածքը ենթակա է վտանգների, ինչպես օրինակ երկաշարժերի, հեղեղումների, սողանքների, տրոպիկական ցիկլոնային քամիների, փոթորկոտ ակտիվությունների, ցունամիի կամ հրաբխային ժայթքումների և կլիմայական փոփոխությունների (տե՛ս հավելված 1)	+		Հայաստանը գտնվում է ակտիվ տեկտոնական գոտում ... իր բոլոր հնարավոր հետևանքներով
2 Արդյոք կարո՞ղ են ջերմաստիճանի, տեղումների փոփոխությունները կամ ծայրահեղ իրադարձությունների շարքը նախագծի տևողության ընթացքում ազդել տեխնիկական կամ ֆինանսական կայունության վրա (օրինակ՝ անձրևների քանակի փոփոխությունների պատճառով կայուն ջրամատակարարման կրճատում, ծովի մակարդակի բարձրացման պատճառով առաջարկվող ջրամատակարարման աղբյուրի աղակալում)	+		տեղումների քանակի կրճատումը կարող է հանգեցնել աղբյուրների ջրի նվազմանը, ինչն իր հերթին կհանգեցնի կայուն ջրամատակարարման խաթարմանը
3 Արդյո՞ք նախագիծը ունի դեմոգրաֆիկ կամ հասարակա-տնտեսական կողմեր, որոնք արդեն խոցելի են (օրինակ՝ բնակչության, գյուղական-քաղաքային ներգաղթողների, անօրինական բնակիչների, ազգային փոքրամասնությունների, կանանց կամ երեխաների հաճախակի անտեսվածության)		+	
4 Արդյո՞ք նախագիծը կարող է մեծացնել կլիմայական աղետների հնարավորությունը շրջակա միջավայրում (օրինակ՝ ջրի օգտագործում խոցելի աղբյուրից, որից օգտվում են մեծ թվով սպառողներ, կամ նպաստել երկրաշարժի գոտիներում բնակության հաստատմանը)		+	

* Աղետը համարվում են հավանական վնասակար ֆիզիկական իրադարձություն